



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ  
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)**

*N1(2) 2008թ. նոյեմբերի 20- դեկտեմբերի 20*

13 հունվարի, 2009թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ</i> .....	3
1.1 Օրենքներ .....	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ.....	4
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ .....	5
<i>2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ</i> .....	6
<i>3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ</i> .....	8
3.1 Կառուցվածք և գործառույթներ.....	8
3.2 Ծրագրեր և կատարողականություն .....	8
3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների .....	11
3.4 Միջազգային համագործակցություն .....	11
3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում .....	12
3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն.....	13
3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր.....	14

## 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

### 1.1 Օրենքներ

Փաստաթուղթ.	«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	27 նոյեմբերի, 2008թ., ՀՕ-201-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ
Ուժի մեջ է.	01 հունվարի, 2009

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ անձնական նվազեցումը հավասարեցվել է նվազագույն ամսական աշխատավարձին՝ կազմելով 30 000 դրամ նախկին 25 000 դրամի փոխարեն: Նշենք, որ եկամտահարկի սանդղակային դրույքաչափում փոփոխություն տեղի չի ունեցել:

Փաստաթուղթ.	«Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	27 նոյեմբերի, 2008թ., ՀՕ-203-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարվել են հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1. օրենքի 5-րդ հոդվածում (հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման պարտադիր պահանջները) կատարվել է լրացում, համաձայն որի հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները ևս սահմանում է ՀՀ կառավարությունը,

2. նոր խմբագրությամբ շարադրվել է օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի տուգանքների գումարների **երեսուն** տոկոսի չափով մասհանումները գանձվում են հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդ՝ գործող տաս տոկոսի փոխարեն:

Փաստաթուղթ.	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	27 նոյեմբերի, 2008թ., ՀՕ-205-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված հիմնական փոփոխություն այն է, որ 8-րդ հոդվածը (պատասխանատվությունը օրենքի պահանջների խախտման համար) լրացվել է նոր 4-րդ մասով, համաձայն որի տուգանքների գումարների **երեսուն** տոկոսի չափով մասհանումները գանձվում են հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդ:

Փաստաթուղթ.	«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	27 նոյեմբերի, 2008թ., ՀՕ-217-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ
Ուժի մեջ է.	01 հունվարի, 2009թ.

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ նախատեսվել է, որ մինչև **2012թ. հունվարի 1-ը** ոռոգման ջրի մատակարարման գծով շահութահարկի վճարման ժամկետը հետաձգվում է մինչև դրա իրացման դիմաց վճարման հաշվետու ժամանակաշրջանը՝ նախկինում նախատեսված 2009թ. հունվարի 1-ի փոխարեն:

Փաստաթուղթ.	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	27 նոյեմբերի, 2008թ., ՀՕ-218-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ

Ուժի մեջ է.

01 հունվարի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքում կատարված փոփոխությամբ մինչև **2012թ. հունվարի 1-ը** ոռոգման ջրի գծով մատակարարման գործարքների մասով ԱԱՀ-ի վճարման պարտավորության ծագման պահը որոշվում է մատուցված և ստացված ծառայությունների դիմաց վճարման պահով:

**1.2 ՀՀ կառավարության որոշումներ**

Փաստաթուղթ.	«Հարկային վարչարարության օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզավճարների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	30 հոկտեմբերի, 2008թ., 1330-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 70 (660), 03.12.2008թ
Ուժի մեջ է.	13 դեկտեմբերի, 2008թ.

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ հաստատվել է օրենքով սահմանված կարգով կիրառվող, հարկային մարմնում գրանցված ՀԴՄ-ների միջոցով տրամադրված կտրոնների հատուկ համարների վիճակահանության անցկացման և վիճակահանության արդյունքում շահող կտրոններ տիրապետող ֆիզիկական անձանց պարզավճարների տրամադրման կարգը:

ՀՀ-ում 2009 թվականից յուրաքանչյուր ամսվա ընթացքում տպագրված ՀԴՄ կտրոնների հատուկ համարները մասնակցելու են այդ ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը կազմակերպվող և հանրային հեռուստատեսությամբ ուղղակիորեն ցուցադրվող վիճակահանությանը: Վիճակահանության արդյունքում կտրոն տիրապետողը հնարավորություն է ունենալու շահելու 5 հազար դրամից 5 միլիոն դրամ պարզավճար, ինչպես նաև բոնուս, որը կտրոնի վրա արտացոլված ձեռքբերման արժեքից կախված կարող է կրկնապատկել պարզավճարը:

Փաստաթուղթ.	«ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի №946-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	13 նոյեմբերի, 2008թ., 1391-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (661), 10.12.2008թ
Ուժի մեջ է.	20 դեկտեմբերի, 2008թ.

**Համառոտ նկարագիր**

ՀՀ կառավարության 01.06.2005թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» թիվ 946-Ն որոշման մեջ կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ ՀԴՄ-ների կտրոնների տպագրման համար կիրառվող ժապավենները պետք է բավարարեն ՀՀ ԿԱ ՊԵԿ հաստատած տեխնիկական և որակական բնութագրերին, պաշտպանվածության աստիճաններին, իսկ վիճակահանության անցկացման ժամանակահատվածում՝ ժապավենների դարձերեսին պետք է տպագրված լինեն հատուկ համարներ և երկնիշ սերիաներ:

Վիճակահանության անցկացման ժամանակահատվածում ՀԴՄ շահագործողներին ժապավենների իրացումը և հատուկ համարների միասնական հաշվառումն իրականացնելու է միայն այդ նպատակով հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված՝ կոմիտեի կողմից երաշխավորված կազմակերպությունը:

Փաստաթուղթ.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի № 1325-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	13 նոյեմբերի, 2008թ., 1404-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 71 (661), 10/12/2008թ
Ուժի մեջ է.	20 դեկտեմբերի, 2008թ.

**Համառոտ նկարագիր**

ՀՀ կառավարության 26.08.2004թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 1325-Ն որոշման մեջ կատարված լրացմամբ սահմանվել է, որ վիճակահանության անցկացման ժամանակահատվածում ՀԴՄ շահագործողները պարտավոր են ՀԴՄ-ի միջոցով տպել ու գումարը ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին տրամադրել ժապավենի դարձերեսին հատուկ համարներ պարունակող կտրոն: Այլ ժապավեններով ՀԴՄ

կտրոնների տպագրումն ու տրամադրումը համարվելու է ՀԴՄ շահագործման կանոնների խախտում և առաջացնելու է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Փաստաթուղթ.	«ՀՀ-ում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար “2009” թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառության մեջ դնելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	11 դեկտեմբերի, 2008թ., 1470-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 75 (665), 29/12/2008թ
Ուժի մեջ է.	պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ՝ 2008 թվականի դեկտեմբերի 11-ից կիրառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի համար “2009” թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը:

Փաստաթուղթ.	«ՀՀ-ում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար “2004”, “2005” թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառությունից հանելու և այդ դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումն արգելելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	11 դեկտեմբերի, 2008թ., 1471-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 75 (665), 29/12/2008թ
Ուժի մեջ է.	պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ.

- 2009 թվականի հունվարի 1-ից կիրառությունից հանվում են Հայաստանի Հանրապետությունում արտադրվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար “2004”, “2005” թվագրումով ակցիզային դրոշմանիշերը,
- 2009 թվականի մարտի 1-ից արգելվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ “2004” թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ծխախոտի արտադրանքի իրացումը,
- 2009 թվականի մարտի 1-ից արգելվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ “2005” թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների իրացումը, Սահմանվում է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն մինչև 2009 թվականի ապրիլի 1-ը պետք է ապահովի “2004”, “2005” թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերի դուրս գրման և ոչնչացման կարգը և ապահովի այդ աշխատանքների կատարումը:

Փաստաթուղթ.	«ՀՀ կառավարության 2000թ. օգոստոսի 12-ի թիվ 471 և 2007թ. նոյեմբերի 23-ի թիվ 1386-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	18 դեկտեմբերի, 2008թ., 1508-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 75 (665), 29/12/2008թ
Ուժի մեջ է.	01 հունվարի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

ՀՀ կառավարության որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ կառավարության 12.08.2000թ. «Պարզեցված հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի հաշվառման կարգի մասին» թիվ 471 և ՀՀ կառավարության 23.11.2007թ. «Պարզեցված հարկային հաշվառման (այդ թվում՝ ապրանքանյութական արժեքների գրանցումների մասով) կարգը սահմանելու մասին» թիվ 1386-Ն որոշումները կապված այն հանգամանքի հետ, որ 2009 հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվում «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը:

**1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ**

Փաստաթուղթ.	“Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման քննությունների անցկացման կարգը հաստատելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
-------------	---

Ամսաթիվը և համարը.	դեկտեմբերի 25, 2008թ., 200-Ն
Ուժի մեջ է.	Ստորագրման պահից

### Համառոտ նկարագիր

Հրամանով կարգավորվել են մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման քննությունների անցկացման հետ կապված հարցերը: Սահմանվել է դրույթ, որի համաձայն՝ մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման քննությունների դրանց հարցաշարի և նախապատրաստական դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է տեղադրվի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ինտերնետային կայք-էջում:

Փաստաթուղթ.	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2008թ. հոկտեմբերի 15-ի «Մաքսային միջնորդի և մաքսային փոխադրողի մատուցած ծառայությունների դիմաց սահմանված սակագների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
-------------	--

Ամսաթիվը և համարը.	դեկտեմբերի 25, 2008թ., 201-Ն
Ուժի մեջ է.	Ստորագրման պահից

### Համառոտ նկարագիր

Հրամանով կանոնակարգվել են մաքսային միջնորդի և մաքսային փոխադրողի մատուցած ծառայությունների դիմաց սահմանված սակագների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման հետ կապված հարցերը: Սահմանվել է, որ մաքսային միջնորդը և մաքսային փոխադրողը պետք է վերադաս մաքսային մարմնին տրամադրեն իրենց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանված սակագները՝ մաքսային ծառայության ինտերնետ կայքում տեղադրելու համար: Բացի այդ, նրանք իրենց գրասենյակներում և գործունեության իրականացման վայրերում հաճախորդների համար տեսանելի տեղերում պետք է փակցնեն այդ սակագների վերաբերյալ ընթերցանելի տեղեկատվական թերթիկներ:

## 2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ

Փաստաթուղթ.	«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 նոյեմբերի, 2008թ., ՀՕ-200-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ
Ուժի մեջ է.	01 հունվարի, 2009թ.

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ ամսական նվազագույն աշխատավարձը սահմանվել է 30 000 դրամ նախկին 25 000 դրամի փոխարեն: Համապատասխան փոփոխություն է կատարվել նաև ժամավարձի և գործավարձի դրույքաչափերում:

Փաստաթուղթ.	«ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	27 նոյեմբերի, 2008թ., ՀՕ-197-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 74 (664) 26.12.2008թ.
Ուժի մեջ է.	01 հունվարի, 2009թ.

### Համառոտ նկարագիր

Օրենքով հաստատվել է ՀՀ 2009թ. պետական բյուջեն, համաձայն որի 2009թ. հարկային եկամուտների և պետական տուրքի գումարը կազմելու է 727.4 մլրդ. դրամ, պարտադիր սոցիալական ապահովության վճարներինը՝ 128.4 մլրդ. դրամ:

ՀՀ 2009թ. պետական բյուջեով նախատեսված ցուցանիշները 2008թ. համեմատությամբ.

Անվանումը	2008	2009	աճի տեմպ 2008թ. համեմատ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր(մլրդ. դրամ)	<u>597.1</u>	<u>727.4</u>	<u>21.8</u>
Պարտադիր սոցիալական ապահովության վճար (մլրդ. դրամ)	<u>104.9</u>	<u>128.4</u>	<u>22.4</u>

Փաստաթուղթ.	«Կնիքները պավիլիոն կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	04 դեկտեմբերի, 2008թ., 1445-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 72 (662), 17.12.2008թ.
Ուժի մեջ է.	պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել գործող ՀՀ կառավարության 28.04.08թ «Կնիքներ պատվիրելու թույլտվություն տալու կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշումը: Որոշմամբ հաստատված նոր կարգի հիմնական փոփոխությունն է 8-րդ կետում կատարվածը. (ՀՀ-ում պատվիրվող կնիքների և դրոշմակնիքների տեքստերը գրվում են հայերենով՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով), դրանում հանվել է «Եթե այդպիսի իրավունք տրված է կանոնադրությամբ և կանոնադրությունում առկա են կազմակերպության անվանման օտարալեզու թարգմանություններ» սահմանափակումը:

Փաստաթուղթ.	«ՀՀ կառավարության 2003թ. հունիսի 13-ի N 909-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	04 դեկտեմբերի, 2008թ., 1446-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 75 (665), 29.12.2008թ.
Ուժի մեջ է.	պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության 13.06.03թ. «Պետական կնիքների, դրոշմակնիքների պատրաստման կամ արտադրության լիցենզավորման և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 909-Ն որոշման մեջ կատարված հիմնական փոփոխությամբ վերանում է կնիքի պատրաստման թույլտվության ինստիտուտը: Որոշման մեջ կատարված փոփոխությամբ հղում է արվել նաև ՀՀ կառավարության 04.12.08թ. «Կնիքները պատվիրելու կարգը հաստատելու մասին» N1445-Ն որոշմանը՝ նշելով, որ կնիքներ պատվիրելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Փաստաթուղթ.	«ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	13 նոյեմբերի, 2008թ., 1487-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 75 (665), 29.12.2008թ.
Ուժի մեջ է.	պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի «ՀՀ կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին» N 796-Ն որոշումը:

Որոշմամբ հաստատվել է կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույց՝ առանձին հավելվածի տեսքով:

Նպատակ ունենալով ապահովել կենսաթոշակային չափերի ամենամյա բարձրացում, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմամբ անձի եկամտի և կենսաթոշակի չափի միջև կապի հաստատում, 2010թ.-ից ՀՀ-ում ներդրվելու է բազմաստիճան կենսաթոշակային համակարգ: Կենսաթոշակային համակարգը բաղկացած է լինելու 4 աստիճաններից, որոնցից յուրաքանչյուրը ծառայելու է իր նպատակին, որոնք միմյանցից տարբերվում են՝ կախված շահառուների աշխատած տարիներից և տարիքից:

Հարկային օրենսդրության տեսանկյունից պարտադիր սոցիալական ապահովության վճարի և եկամտահարկի փոխարեն կսահմանվի միասնական հարկ, որի շրջանակներում հարկման նոր բազա կսահմանվի գործատուի սոցիալական ապահովության վճարի և անվանական աշխատավարձի հանրագումարը:

Փաստաթուղթ.	«ՀՀ 2010թ. բյուջետային գործընթացն սկսելու, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2004թ. դեկտեմբերի 2-ի N 790-Ն և 2007թ. դեկտեմբերի 17-ի N 888-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ վարչապետի հրաման
-------------	--



Ամսաթիվը և համարը.	17 դեկտեմբերի. 2008թ. 1033-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 75 (665), 29.12.2008թ.
Ուժի մեջ է.	հրապարակմանը հաջորդող օրվանից

### **Համառոտ նկարագիր**

Որոշման համաձայն ՀՀ 2010թ. բյուջետային գործընթացն սկսելու նպատակով, հաստատվել է ՀՀ 2010թ. պետական բյուջեի մշակման գործընթացի՝ ՀՀ 2010-2012 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2010թ. պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ հավելվածի տեսքով:

### **3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ**

#### **3.1 Կառուցվածք և գործառույթներ**

Փաստաթուղթ.	«ՀՀ կառավարության 04.09.2008թ. թիվ 1005-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	04 դեկտեմբերի, 2008թ., 1425-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 72(662) 17.12.2008թ.
Ուժի մեջ է.	01 հունվարի, 2009թ.

### **Համառոտ նկարագիր<sup>1</sup>**

ՀՀ կառավարության 04.12.2008թ. «ՀՀ կառավարության 04.09.2008թ. թիվ-1005-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1425-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նոր կառուցվածքը: Համաձայն կատարված փոփոխությունների. կառուցվածքի առումով վերահաստատվել է նոր միացյալ **ՊԵԿ-ի վերադաս մարմնի կառուցվածքը**, միացել են մի քանի նույնանուն ստորաբաժանումներ, լուծարվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության ուսումնական կենտրոնը՝ որ նշված էր որպես առանձին ստորաբաժանում<sup>2</sup>: Կենտրոնի աշխատանքները շարունակվելու են վերադաս մարմնի գործող այլ ստորաբաժանումների գործառույթների միջոցով: Միաժամանակ ներկայիս գործող հարկային (տարածքային) տեսչությունների թվաքանակը կրճատվել է 14 ՏՏ (ՏՏՏ)-ով՝ դառնալով 39 հարկային (տարածքային) տեսչություններ:

Պետք է նշել, որ այդ **կրճատվող ՏՏՏ-ների ընտրությունը կատարվել է բազմաթիվ գործոնների հաշվառմամբ**: Միաժամանակ, հարկ վճարողների համար սպասարկման ծառայությունները մատչելի լինելու, ինչպես նաև ընթացիկ հսկողական աշխատանքներում ռիսկերը փոքրացնելու նպատակով նախատեսվում է առայժմ տարածքներում շարունակել պահել սպասարկման և գանձումների բաժինների ոչ մեծաքանակ անձնակազմ: Ներկայումս հաստատված են ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի հրամանով Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության գործառույթները, հիմնված ֆունկցիոնալ կառավարման սկզբունքների վրա: Նախատեսվում է դրա հիման վրա քննարկման դնել ու **հաստատել նաև ՏՏՏ-ների գործառույթները**:

#### **3.2 Ծրագրեր և կատարողականություն**

##### **3.2.1 Ծրագրեր և կատարողականություն / հարկային ծառայության մասով/**

#### **ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագիր**

ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թ. ծրագրով<sup>3</sup> նախատեսված որոշ միջոցառումների ժամկետներ վերանայվում են: Միջոցառումների ժամկետներում (երբեմն դա մեկ ամսվա երկարաձգում է նշանակում) փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

- հարկային և մաքսային մարմինների միավորումը,
- ծրագրում արտաքին ֆինանսավորում պահանջող որոշ միջոցառումների համար ֆինանսական աղբյուրների՝ առայժմ հասանելի դարձած չլինելը,
- մի շարք միջոցառումների համար կատարման ավելի իրատեսական ժամկետներ սահմանելը՝ բարեփոխումների հաջող ընթացքն երաշխավորելու համար,

ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագրով սահմանված

<sup>1</sup> այն ներկայացվել է նաև նախորդ համառոտագրում:

<sup>2</sup> այդ կապակցությամբ տես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ առանձին «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշումը: Համառոտ ներկայացումը տես սույն նյութի 3.5.1. հատվածում



միջոցառումներից այս ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

### **8-րդ միջոցառում**

*Փոքր բիզնեսի ներկայացուցիչների համար պարզեցված հաշվառման և հարկերի հաշվառման ձևաչափի (ինֆորմացիոն թեռթհի) մշակում. ոռո հսկողարեոի 2008թ. մեոոհ*

1. Պատրաստվել են տեղեկատվական թերթիկներ՝  
- «Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչների համար»,

### **28-րդ միջոցառում**

*Հարկային ծառայության ներսում հարկային վարչարարության ընթացակարգերի միատեսակ կիրառման նպատակով համապատասխան ուղեցույցների և ձեռնարկների հաստատում՝*

Մշակվել են հետևյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հրամանները.

1. ՀԴՄ-ների կիրառման հսկողական միջոցառումների մասին (27.10.2008 1-06/449-Ա)

### **31-րդ միջոցառում**

*Հարկ վճարողներին անհրաժեշտ կոնկրետ խնդիրների լուծմանն աջակցելու և օպերատիվ կերպով արձագանքելու նպատակով հարկային ծառայությունում “թեժ գծի” գործարկման համար*

Հարկային մարմնում «Թեժ գծի» գործարկման կապակցությամբ, մշակվել է համաաատասխան ոնթաժանաոա. ոռո հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նահաժահի 28.11.2008թ. թիվ 1-

<sup>3</sup> ՀՀ կառավարության 07.08.08թ. «ՀՀ հարկային վարչարարության ոազմավարության 2008-2011թթ. ծրագիրը հաստատելու մասին» N 941-Ն որոշում (ՀՀՊՏ N 55(645), 03.09.08թ.)

<sup>4</sup> ՏՏ ոլորտի ոազմավարության երկարաժամկետ ծրագրի հաստատումը ՀՀ հարկային վարչարարության ոազմավարության 2008-2011թթ. ծրագրով հաստատված միջոցառումներից է (95-րդ միջոցառում)

համապատասխան ընթացակարգ, որը հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 28.11.2008թ. թիվ 1-06/494-Ա հրամանով:

#### **46-րդ միջոցառում**

*Ընթացակարգի սահմանում հարկային ծառայության կողմից մշակված օրենսդրական և ընթացակարգերին համապատասխան նախագծերը հասարակական քննարկումներին պարտադիր ներկայացնելու համար:*

Փաստաթուղթ.	«ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում մշակված նորմատիվ ակտերի նախագծերը հասարակական քննարկումների ներկայացման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	19 դեկտեմբերի, 2008թ., 1-06/551-Ա
Ուժի մեջ է.	19 դեկտեմբերի, 2008թ.

#### **Համառոտ նկարագիր**

Հրամանով սահմանվել է ընթացակարգ, որով կանոնակարգվում է հարկային մարմնի կողմից մշակվող բոլոր նորմատիվ բնույթի նախագծերի պարտադիր ներկայացումը հանրության քննարկմանը: Դա պետք է տեղի ունենա մինչև դրանք հաստատման ներկայացնելը (երբ խոսքը վերաբերվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ գերատեսչական ակտերի նախագծերին) կամ այլ նախարարություններին ՀՀ կառավարության որոշումների և/կամ օրենքների նախագծերը կարծիքի ուղարկելը:

Հանրային քննարկման իրականացման եղանակներն են՝

- հրապարակումը ՊԵԿ պաշտոնական կայքում
- քննարկումը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հասարակական Խորհրդի նիստում
- հասարակական կազմակերպություններին կարծիքի ներկայացումը

Նախատեսված է, որ բոլոր ստացված առաջարկները պետք է քննության առնվեն նախագիծ մշակողների կողմից և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան փոփոխություններ կատարվեն պատրաստվող նախագծերում:

#### **70-րդ միջոցառում**

*ՀԴՄ-ի շահագործման հետ կապված հասարակության վերահսկողության մեխանիզմի մշակում՝ ներառյալ առաջարկելով քաղաքացիների անձնական շահագրգռվածության գործոնը (որպես օրինակ, կարող է ներդրվել «Վիճակախաղի» գաղափարը)*

Վիճակահանության անցկացման և պարզավճարների տրամադրման կարգը սահմանող որոշումն ընդունվել էր դեռևս 30.10.2008թ.: 13.11.2008թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել են ՀԴՄ ժապավենների նկատմամբ պահանջները և ՀԴՄ շահագործման կանոնները կնոնակարգող երկու որոշումներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով հաստատվել է ՀԴՄ ժապավենների տեխնիկական և որակական բնութագրերը և մրցույթի անցկացման կարգը,

#### **79-րդ միջոցառում**

*Հասարակության լայն խավերին իրազեկել և ծանոթացնել հարկային վարչարարության առաքելության, հիմնական նպատակների և իրականացվելիք միջոցառումների մասին: Նպատակը թափանցիկ աշխատանքի և վստահության մթնոլորտի ձևավորումն է:*

Հարկային վարչարարության առաքելության, հիմնական նպատակների և իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ պարբերաբար իրականացվում են իրազեկման աշխատանքներ, այդ թվում նաև քննարկումներ են իրականացվում ինտերնետային կայքի և ԶԼՄ միջոցով: Աշխատանքներն շարունակվում են հասարակական խորհրդի, հեռուստահաղորդումների և հաղորդակցության այլ եղանակներով: Օրինակ, 2008թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ մի քանի պաշտոնյաներ, այլ թվում նախագահի երկու տեղակալներ, հանդիպում ունեցան ՀՀ հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայում:

Տեղին է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հնարավորություն կունենա նմանատիպ աշխատանքներ իրականացնել նաև այլ ֆորմատներով, մասնավորապես աշխատելով ՀՀ վարչապետի 27 դեկտեմբերի 2008թ. «Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտների բարեփոխումների հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 1085-

Ա որոշմամբ հաստատված հանձնաժողովում (անդամների ցանկում ընդգրկված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Ա.Չիլինգարյանը):

## **SS ոլորտի զարգացման երկարաժամկետ ծրագիր**

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում իրականացվել են քննարկումներ SS ոլորտի առանձնացված ռազմավարության ծրագրի մշակման ուղղությամբ: Քննարկումների արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի SS ոլորտի զարգացման եռամյա ծրագրի նախագիծ, որը համահունչ է ինչպես ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքին, այնպես էլ գերատեսչական մի շարք մարմինների կողմից ներկայացված ծրագրերի ընդհանուր հայեցակարգին (e-governance, կենսաթոշակային բարեփոխումների ծրագիր և այլն):

### ***3.2.2 Ծրագրեր և կատարողականություն/ մաքսային ծառայության մասով/***

Մաքսային վարչարարության բնագավառում իրականացվող բարեփոխումների համատեքստում մշակվել է ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2008-2012թ.թ. արդիականացված ծրագիրը, որը հիմնված է ՀՀ կառավարության 2008-2012թ.թ. գործունեության ծրագրի և միջազգային լավագույն փորձի վրա, որը հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008թ. դեկտեմբերի 10-ի N187-Ա հրամանով: Այդ փաստաթղթի նպատակն է նախանշել այն բոլոր աշխատանքները, որ պետք է իրականացվեն առաջիկա 4 տարիների ընթացքում մաքսային վարչարարությունը բարելավելու նպատակով: Փաստաթուղթը կազմվել է հետևյալ կերպ. նախ ներկայացվել են այն 7 հիմնական սկզբունքները, որոնց անհրաժեշտ է հետևել մաքսային վարչարարությունը կատարելագործելու համար, այնուհետև ներկայացված են այն քաղաքականությունները, որոնց իրականացման միջոցով հնարավոր կլինի հասնել սահմանված նպատակներին և դրանից հետո միայն ներկայացված են կոնկրետ միջոցառումներ, որոնք բխում են այդ քաղաքականություններից: Ընդհանուր առմամբ ստացվել է 60 միջոցառում, որոնք պետք է իրականացվեն մինչև 2012 թվականի ավարտը:

Մինչև 2008թ. չորրորդ եռամսյակի ավարտը նախատեսվում է ավարտի հասցնել 60 միջոցառումներից 17-ը: Բոլոր միջոցառումներն ավարտի են հասցվել սահմանված ժամկետներում: 17 միջոցառումից 5-ը ունեն շարունակական բնույթ:

### ***3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների***

#### ***3.3.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների /հարկային ծառայության մասով/***

Դեկտեմբեր ամսվա ընթացքում քննության են առնվել հարկային ստուգման ակտերի կամ հարկային մարմնի աշխատակիցների գործողությունների կամ անգործության վերաբերյալ հարկ վճարողների 21 բողոք-գանգատներ, որոնցից բավարարվել են 2-ը, իսկ մերժվել են 19-ը: Վերը նշված բողոք-գանգատների վերաբերյալ որոշումները զետեղված են ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում ([www.taxservice.am](http://www.taxservice.am)):

#### ***3.3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների /մաքսային ծառայության մասով/***

Համառոտագրի ընդգրկման ժամանակահատվածում գանգատ (բողոք) չի ներկայացվել:

### ***3.4 Միջազգային համագործակցություն***

#### ***3.4.1 Միջազգային համագործակցություն /հարկային ծառայության մասով/***

2008թ. նոյեմբերի 17-21 Լյուքսեմբուրգում անց է կացվել կրկնակի հարկումը բացառելու պայմանագրի շուրջ բանակցությունների երկրորդ փուլը, որին հայկական կողմից հանդես են եկել՝ ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացուցիչները: Բանակցությունների արդյունքում նախաստորագրվել է «**Հայաստանի Հանրապետության կառավարության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին**» կոնվենցիան:

Կրկնակի հարկումը բացառելու մասին գործող համաձայնագրերի կիրառման ոլորտում՝ 2008թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ստացվել, ուսումնասիրվել, պատրաստվել և համապատասխան ընթացք են տրվել ոչ ռեզիդենտ ընկերությունների կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից գանձվող հարկի դրույթաչափի նվազեցնելու կամ հարկումից ազատելու նպատակով ներկայացված 17 սերտիֆիկատ-դիմումներ:

ԱՊՀ մասնակից պետությունների **Հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի** (ՀՕՂՀԽ) գործունեության շրջանակներում՝ 2008թ. նոյեմբերի 21-ին Ադրբեջանի Բաքու քաղաքում տեղի է ունեցել հերթական (15-րդ) նիստը, որին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի պատվիրակությունը չի մասնակցել՝ հայ պատվիրակների անվտանգության բավարար երաշխիքներ չունենալու պատճառով: 2009թ.-ից ԱՊՀ անդամ պետությունների ՀՕՂՀԽ-ի նախագահությունը՝ մեկ տարի ժամկետով անցնում է Ռուսաստանի Դաշնության հարկային մարմնին, իսկ հաջորդ 16-րդ նիստը նախատեսված է անցկացնել 2009 թվականի առաջին կիսամյակում ՌԴ-ում:

ԱՊՀ մասնակից պետությունների **Հարկային (ֆինանսական) նախաքննության մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի** (ՀՆՄՀԽ) գործունեության շրջանակներում՝ 2008թ. նոյեմբերի 17-27-ը կազմակերպվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության 2 աշխատակցի մասնակցությունը ՌԴ ՆԳՆ Տնտեսական անվտանգության ակադեմիայում կազմակերպված դասընթաց-սեմինարին՝ ինչը նախատեսված էր ԱՊՀ անդամ պետությունների ՀՆՄՀԽ 2008թ. աշխատանքային պլանով:

Փաստաթուղթ.	«2008թ. հուլիսի 6-ին Երևանում ստորագրված ՀՀ և Չեխիայի հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՀՀ սահմանադրական դատարանի որոշում
Ամսաթիվը և համարը.	16 դեկտեմբերի, 2008թ., ՄԴՈ-784
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 75 (665), 29.12.2008թ.
Ուժի մեջ է.	հրապարակման պահից

### **Համառոտ նկարագիր**

Համաձայնագիրը ստորագրվել է 2008թ. հուլիսի 6-ին Երևանում: Համաձայնագրի նպատակն է շահութահարկի, եկամտահարկի և գույքահարկի շրջանակում բացառել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը և այդպիսով նվազեցնել եկամտային և գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը միջազգային առևտրի և ներդրումների վրա: ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ ՀՀ և Չեխիայի հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ սահմանադրությանը:

### **3.4.2 Միջազգային համագործակցություն / մաքսային ծառայության մասով/**

ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության պատվիրակությունը 2008 թվականի դեկտեմբերի 28-29-ը ք.Մոսկվայում մասնակցել է ՀՀ և ՌԴ մաքսային ծառայությունների ներկայացուցիչների աշխատանքային հանդիպմանը՝ նվիրված Կովկաս նավահանգստում ենթակցիզային ապրանքների մաքսային ձևակերպման կազմակերպման հարցերին: Հանդիպման ընթացքում նաև քննարկվել են ՀՀ և ՌԴ միջև ենթակցիզային ապրանքների շրջանառության վերաբերյալ վիճակագրական տվյալների փոխանակման հարցը, սեյֆ-փաթեթների կիրառման վերաբերյալ ՌԴ-ում գործող օրենսդրությունը և այլն:

### **3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում**

#### **3.5.1 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով/**

Վերջին ամիսներին Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ համատեղ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից կազմակերպվել էին դասընթացներ՝ «Հայաստանի հարկային համակարգ» թեմայով, որին մասնակցել են թվով 273 մարդ:

2008թ. դեկտեմբերի 18-ին անց է կացվել մրցույթ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության թափուր հաստիքները համալրելու նպատակով: Ընդհանուր առմամբ մրցույթին մասնակցել են 143 մարդ՝ 26 թափուր աշխատատեղերի համար, որոնցից 22-ը կհամալրվեն: Ընդ որում դասընթացների մասակցի-ներից մրցույթին մասնակցելու ցանկություն են հայտնել 48-ը, որոնցից 20-ը հաղթող են ճանաչվել և աշխատանքի են անցել 10-ը:

Փաստաթուղթ.	«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	04 դեկտեմբերի, 2008թ., 1497-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 75 (665), 29.12.2008թ.
Ուժի մեջ է.	հրապարակմանը հաջորդող օրվանից

**Համառոտ նկարագիր**

Որոշման համաձայն նախատեսվում է ստեղծել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, որի հիմնական նպատակն է հարկային և մաքսային մարմիններում ծառայողների վերապատրաստումը, վերաորակավորումը, մասնագիտական որակավորման բարձրացումը:

**3.5.2 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում / մաքսային ծառայության մասով/**

2008թ. նոյեմբերի 12-ին հայտարարվել էր մրցույթ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության թափուր հաստիքները համալրելու նպատակով: Մրցույթի վերաբերյալ զետեղումն կատարվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և [www.customs.am](http://www.customs.am) ինտերնետային կայքում: Մրցույթը հայտարարված էր ՀՀ ԿԱ ՊԵԿ **մաքսային ծառայության վերադաս մարմնի 20 և տարածաշրջանային մաքսատների 5 թափուր աշխատատեղերի համար**: Մրցույթն անց է կացվել 2008թ. դեկտեմբերի 18-19-ը, որի արդյունքում համալրվել են վերադաս մաքսային մարմնի 18 և տարածաշրջանային մաքսատների 5 թափուր աշխատատեղեր:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող հակակոռուպցիոն կրթադաս-տիարակչական ծրագրի շրջանակներում «Ապագան քոնն է» ՀԿ-ն նախաձեռնել էր ավագ դպրոցների աշակերտների հանդիպումը ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնյաների հետ: Հարկային-մաքսային համակարգերի ներկայացուցիչները դպրոցականներին մանրամասն ներկայացրեցին այն հիմնական քայլերը, որոնք ձեռնարկվում են ՊԵԿ-ի կողմից կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում՝ այդ հարցում կարևորելով նաև ուսումնական դասընթացների նշանակությունը:

**3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն**

**3.6.1 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն / հարկային ծառայության մասով/**

ՀՀ ԿԱ ՊԵԿ «թեժ գիծ» ծառայության միջոցով 2008թ. դեկտեմբեր ամսին ստացվել է 140 զանգ, որից 20-ը եղել են բողոքներ և առաջարկություններ՝ կապված հարկային օրենսդրության տարբեր դրույթների հետ: Բողոքների հիմնական մասը վերաբերել է առևտրի իրականացման վայրերում ՀԴՄ կտրոնների չտրամադրման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ առնչվում է հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունների կիրառման մեխանիզմներին և ժամկետներին: Բացի այդ բազմաթիվ հարցեր են տրվել ՀԴՄ նոր կտրոնների գործածության ժամկետների և նոր ժապավենների ձեռք բերման մեխանիզմների վերաբերյալ:

Միաժամանակ, ՀՀ ԿԱ ՊԵԿ «թեժ գիծ» ծառայության միջոցով ստացվող հարցադրումների պատասխանելու ընթացակարգը կանոնակարգելու նպատակով ընդունվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման.

Փաստաթուղթ.	«ՀՀ ԿԱ ՊԵԿ «Թեժ գծի» միջոցով ստացված հարցադրումների մշակման մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	28 նոյեմբերի, 2008թ., 1-06/494-Ա
Ուժի մեջ է.	28 նոյեմբերի 2008թ.

## **Համառոտ նկարագիր**

Հրամանը նպատակ է հետապնդում լուծում տալ՝ հասարակության հարցադիմումները «Թեժ գծի» միջոցով ընդունելու ընթացքում առաջացող խնդիրներին՝ սահմանելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ներգրավված ստորաբաժանումների և պատասխանատու աշխատակիցների պարտականությունները (թեժ գծի հեռախոսահամարն է՝ 59-46-18): Համաձայն հրամանով սահմանված ընթացակարգի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը 2 օրվա ընթացքում (հիմնավոր պատճառաբանման դեպքում՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում) պատրաստում և ներկայացնում է «թեժ գծով» ստացված հարցի պատասխանը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի իրավասու տեղակալի ուշադրությանը: Վերջինիս հավանությանն արժանանալու դեպքում՝ պատրաստված պատասխանը 1 աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսագանգի միջոցով փոխանցվում է դիմողին (անհրաժեշտության դեպքում՝ հարց դիմողին հրավիրում են ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ բարձրացված հարցը բանավոր պարզաբանելու նպատակով):

### **3.6.2 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/**

«Թեժ գծով» նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 20-ն արձանագրվել է 12 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի որոշման, ապրանքի /հիմնականում ավտոմեքենաների/ գնահատման, ինչպես նաև փոխադրման ամփոփագրերի լրացման հետ կապված հարցերին: Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ գրավոր պատասխան է տրվել, կամ էլ հրավիրել են կոմիտեի համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

Նշված ժամանակահատվածում «Թեժ գծով» օրական արձանագրվել է միջինը 20-25 զանգ: Ձանգահարողների մեծ մասին հետաքրքրել են կոմիտեի պաշտոնական կայքից օգտվելու ձևերը: Նրանց զգալի մասը նաև հետաքրքրվել են մաքսային միջնորդների /բրոքերների/ համար անցկացվող դասընթացներով /դասընթացների անցկացման վայրի և ժամկետների ճշտում/: Ձանգահարողներին հետաքրքրել են նաև կոմիտեի ստորաբաժանումների տարբեր հեռախոսահամարներ ու մաքսային մարմիններից խորհրդատվություն ստանալու կարգը:

Նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 20-ն արձանագրված բոլոր բողոքներին արձագանքվել է: Վերը նշված ժամանակահատվածում զանգահարողների կողմից որևէ առաջարկություն չի ստացվել:

## **3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր**

### **3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր**

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 21 հոկտեմբերի 2008թ. թիվ 1-06/445-Ս հրամանով հաստատված ֆորմատով նոյեմբերի 20-ին հրապարակվել է հարկային վիճակագրական տեղեկատու<sup>5</sup>: Ստորև ներկայացվում են քաղվածքներ այդ նյութից:

<sup>5</sup> <http://www.taxservice.am>

	Ցուցանիշ	2008 թվական		
		Նույնաբեր	Հունվար-նոյեմբեր	Աճի տեմպ <sup>6</sup> %
		1	2	3
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (միավոր)	1526	20,935	132.3
2	Հարկային մարմնի կողմից պետ բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	38,044.4	395,438.9	118.8
2.1	ԱԱՀ	8,420.7	100,063.6	123.3
2.2	Շահութահարկ	7,911.3	79,058.8	120.4
2.3	Ակցիզային հարկ	932.5	11,600.3	101.0
2.4	Եկամտահարկ	4,490.9	47,315.6	1170.3
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	8,981.2	93,796.0	119.5
2.6	այլ	7,308	63,604	114
3	Հարկային մարմնի կողմից կատարված հարկային ստուգումներ (հատ)	1149	14110	97.4
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	3,295.7	35,931.0	172.6

### 3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2007 թվական		2008 թվական		
		Նույնաբեր	Հունվար-նոյեմբեր	Նույնաբեր	Հունվար-նոյեմբեր	Աճի տեմպ <sup>7</sup> %
		1	2	3	4	5
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված մաքսային եկամուտներ (մլն դրամ)	32,380	193,038	29,641	266,263	137.9
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	148,528	1,345,801	145,399	1,540,532	114.5
	արտահանում (մլն դրամ)	38,500	360,074	20,324	305,193	84.8
	ներմուծում (մլն դրամ)	110,028	985,727	125,075	1,235,339	125.3
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	4,458	27,581	5,288	32,131	116.5

<sup>6</sup> Նախորդ տարվա նույն (աճողական) ժամանակահատվածի նկատմամբ:

<sup>7</sup> Նախորդ տարվա նույն (աճողական) ժամանակահատվածի նկատմամբ: